ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴՇ-14/05

ք. Երևան «30» «հունվարի» 2014թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Է.Փիրումյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրեն **Գ.Սարգսյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1414-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ»** ծրագրի՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 06 (բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների իրականացում) (այսուհետ՝ ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **109 828 800 (հարյուր ինը միլիոն ութ հարյուր քսանութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2014 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (հավելված 2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Ջրվեժ 89
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Խորհրդային» մ/ճ
ՀՀ 900011007805	ՀՀ 163078303142
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00804807
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն
Է.Փիրումյան	**Գ.Վարդանյան**
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)

Հավելված № 1
« 30 » « հունվարի » 2014թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-14/05 պայմանագրի

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք.Երևան, Ջրվեժ 89 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Խորհրդային» մ/ճ
ՀՀ 900011007805 ՀԿՀՀ 02507198	ՀՀ 163078303142 ՀԿՀՀ 00804807
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն
Է.Փիրումյան	**Ա.Գևորգյան**
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծրագրի իրականացման

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1.	Արգելոցապարկային համալիրի պահպանություն/պաշտպանություն	«ԱՊՀ» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող տարածքների պահպանություն (846հա)	Պահպանության միջոցառումներ	Չխախտված էկոհամակարգեր	31.12.2014թ.	**86 083 300**
2.	Հակահրդեհային միջոցառումներ	1. Հակահրդեհային ճանապարհների խնամք՝ 2 կմ ընդհանուր երկարությամբ, 2. Հանքայնացված շերտերի կառուցում 4 կմ ընդհանուր երկարությամբ (2.5հա)	Հողի վերին շերտի հանքայնացում, բուսական մնացորդների հեռացում, առուների պատրաստում և մաքրում, ավազի տարածում, հողի վրա	Հարակից տարածքներից հրդեհների ներթափանցման կանխում	30.09.2014թ.	**706 000**

3.	Արգելոցապարկային համալիրի տնօրինության ներքո անտառտարածքների հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում (գարնանային – 2-րդ եռամսյակ, աշնանային – 3-4-րդ եռամսյակներ)	Անտառային տարածքների հերթական վերստուգիչ գարնանային և աշնանային ստուգումներ ու ամփոփում	Ստուգումների և արդյունքների ամփոփման միջոցառումներ	Բացթողումների, թերությունների բացահայտում և վերացում	31.12.2014թ.	**1 000 000**
4.	«Էրեբունի» պետական արգելոցում և հարակից տարածքներում տարածված հազվագյուտ, անհետացող և Կարմիր գրքում գրանցված տեսակների գենոֆոնդի գիտական ուսումնասիրությունների և մոնիտորինգի իրականացում	Գիտական ուսումնասիրությունների և մոնիտորինգի իրականացում	Ավանդական մեթոդներով դաշտային ուսումնասիրություններ արգելոցում և հարակից տարածքներում	Տեղի ունեցող բնական երևույթների հետևում և հայտնաբերում	31.12.2014թ.	**600 000**
5.	«Ջրվեժ» անտառապարկում և դենդրոպարկերում բնական ու ներմուծված ծառաթփատեսակների բազմազանության, ֆաունայի հետազոտում և տեսակային կազմի համալրման միջոցառումներ	Տեսակային կազմի ամբողջական ցուցակների ստեղծում և լրացում	Դաշտային ուսումնասիրություններ և նոր տեսակների ներմուծում	Լրամշակված ցուցակների ստեղծում, նոր տեսակների ներմուծում	31.12.2014թ.	**3 200 000**
6.	«Որդան կարմիր» պետական արգելավայրի ֆլորայի ուսումնասիրություն և Որդան կարմիր միջատի հաշվառում ու մոնիտորինգ	Ֆլորայի ուսումնասիրություն և Որդան կարմիր միջատի հաշվառում ու մոնիտորինգ	Ավանդական մեթոդներով դաշտային ուսումնասիրություններ արգելավայրի տարածքում, միջատի հաշվառում ու մոնիտորինգ	Լրամշակված ցուցակների ստեղծում, Որդան կարմիր միջատի մոնիտորինգային տվյալների թարմացում	31.12.2014թ.	**800 000**
7.	«Ջերմուկի ջրաբանական» և «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրերի ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրությունների իրականացում	Ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրությունների իրականացում	Ավանդական մեթոդներով բուսական և կենդանական աշխարհի դաշտային ուսումնասիրություններ	Գույքագրման ցուցակների ստեղծում	31.12.2014թ.	**600 000**
8.	Ինտերնետային կապի ապահովում, համակարգչային տեխնիկայի և ծրագրերի սպասարկում	Ինտերնետային կապի ապահովում, համակարգչային տեխնիկայի և ծրագրերի սպասարկում	Ինտերնետային կապի առկայություն, գործող համակարգչային տեխնիկա	Գործող ինտերնետային կայք, կապ և համակարգչային տեխնիկա	31.12.2014թ.	**300 000**
9.	Անտառմշակութային կուլտուրաների միանվագ խնամք	Անտառապարկում խնամքի միջոցառումներ	Ծառերի էտ, ձևավորում, ոռոգում, բաժակների և առուների մաքրում ու ձևավորում	Խնամված անտառապարկ	31.12.2014թ.	**6 300 000**
10.	Անտառմշակութային կուլտուրաների լրացում	Ցածր լրիվության տարածքների ծառապատում	Ծառատունկ	Բարձր լրիվության անտառմշակութային կուլտուրաներ	31.12.2014թ.	**1 370 000**
11.	Տնկարանի հիմնում և խնամք	Տնկիների արտադրության կազմակերպում	Տնկարանի հիմնում և խնամք	Տնկիների ստացում	31.12.2014թ.	**282 000**
12.	Ոռոգման միջոցառումներ	1. Ոռոգման ջրի ձեռքբերում, 2. Խողովակաշարի վերանորոգում	1. Ոռոգման ջրի ապահովում, 2. Ջրդում և խողովակների փոխարինում	Գործող խողովակաշարով ոռոգման ջրի ապահովում	30.09.2014թ.	**8 587 500**
	ԸՆԴԱՄԵՆԸ					**109828800**

Հավելված № 2
« 30 » « հունվարի » 2014թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-14/05 պայմանագրի

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք.Երևան, Զրվեժ 89 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Խորհրդային» մ/ճ
ՀՀ 900011007805 ՀՎՀՀ 02507198	ՀՀ 163078303142 ՀՎՀՀ 00804807
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ տնօրեն
Ֆ. Փիրումյան	**Գ.Սարգսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչը		Ծառայության (միջոցառման) անվանումը «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական-ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
1155	ԱԾ 06	Նկարագրություն Բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացում								
Չափորոշիչներ			I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
Քանակական		ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն (պաշտպանություն), հա	846	846	846	846				
		Մարդու գործունեության հետևանքով ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, հա	846	846	846	846				
		ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում, ստուգումների քանակը		1	1	2				
		ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության մշտական դիտարկումներ, բնության ժառանգության գիտական ուսումնասիրություն, հաշվետվությունների թիվը	1	2	3	4				
Որակական		Մշակված չէ								
Ժամկետայնության		Հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում				Գարնանային II եռամսյակ, աշնանային III - IV եռամսյակ				
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)			X	X	X	X	16971.5	38185.8	69388.7	109828.8
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը										
1155 Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման ծառայություններ										
Վերջնական արդյունքի նկարագրությունը										
Բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման արդյունքում աղքատության նվազեցում, բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում										
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը										
«Արգելոցապարկային համալիրի» ՊՈԱԿ										